

ՃԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

ԻՇԱՆԴԷՍ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՓԱՂԱՔԱԳԼԽՈՅՆ ԵՒ ՊԱՏՈՐԻՈՅ

ԱԶՆՈՒԱԿԱՆ

ՄԻՔԱՅԵԼԻ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Ի 16 ՄԱՐՏԻ 1862 ԱՄԻ, ԻՍԻՄՖԵՐՈՓՈԼ

,, Պարտ է ապականացուիս այսմիկ զգենուլ զանապականութիւն, եւ մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն ,, :
ԿՈՐՆԹ. Ա.

Ծանր է ամենայն մարդոյ համար կորուստ բարեկամի եւ սիրելւոյ. բնական է մարդոյ ցօղել արտասուօք նորա յաւիտենականութեան ճանապարհը, եւ սրտակտուր աղաղակներով եւ տխրագէմ սգով իւր հոգւոյն հառաչանքը ուղեկից տալ իւր սիրելւոյն: Քանի շատ բարեկամք եւ սիրելիք, այնչափ աւելի կսկծալի ողբեր եւ հառաչանքներ կը-պատեն նորա տխուր բնակարանը:

Այս տխուր զգացմունքով մեք, Քրիստոսասէր եղբարք, ժողոված այսօր մեր հասարակաց մօր Սուրբ եկեղեցւոյս փրկական ծոցը, մեր քրիստոնէական բարեմաղթութեանց հետ կխառնեմք արտասուք մեր անգիւտ սիրելւոյ՝ Ազնուական Միքայելի Եղիազարեան Մուրատեանց անդարձ բաժանման համար. վասն զի կզրկուիմք մէկ արժանայիշատակ եւ չնաշխարհիկ բարեկամէ, սիրելիէ եւ եղբօրէ: — Ցաւալի յիշատակ. կորուսինք եղբարք մարդ մը, բայց այս թերակղզւոյս մեր համազգի արժանաւոր մարդկանց մէկը, ուստի եւ ոչ մի գերդաստանի եւ մի քանի բարեկամի, այլ հաղարաւոր մարդկանց ողբալի:

Զեր տխուր կերպարանքն անգամ, քրիստոսասէր ժողովուրդք, ինքնին վկայ իմ խօսքերուս, թէ հանգուցեալս այս քանի պանծալի յատկութեամբք բարի անուն ժառանգեց: Ո՞վ կմոռնայ սորա առաքինազարդ կեանքը, սորա ազգասէր հոգին, սորա նախանձաւորութիւնը իպայծառութիւն եկեղեցւոյ, սորա անաչառ դատողութիւնքը, աղքատաց խնամակալութիւնը, վշտացեալ անձանց կարեկցութիւնը, իւր օգնութեանը դիմողներուն ըրած անձնանուէր ձեռնտուութիւնը, եւ այլ այսպիսի շատ անմոռանալի եւ գովելի յատկութիւնքը, որոց յիշատակը մեր արտասուաց վտակները կաւելացնեն:

Բայց ինչու համար, սիրելիդ մեր, այդ երեսունեւեօթը տարուան ծաղկեալ հասակին արդիւնաշատ հասկը անժամանակ խո-

նարհեցաւ մահուն անագորոյն մանգաղին տակը. ինչու համար քո տաղանդաւոր գլուխը անշարժ կենջէ մահուն բարձին վերայ. ինչու համար քո գթահայեաց աչքերը մահուն խոր քնովը կնքուեր է. ինչու համար չլսեր քու ականջդ քո սգաղդեաց սիրելի ամուսնոյդ եւ եղբարցդ հառաչանքը, քո թոթովախօս որդւոցդ հեկեկանքը, եւ բոլոր ժողոված բարեկամացդ պաղատանքը: Քո ճարտար լեզուիդ ամենաքաղցր մխիթարութեանը կկարօտին քո սիրելիքը, որով ցայսօր ամենայն նեղելոց մխիթար եւ վշտացելոց պաշտպան կհանդիսանայիր: Բայց քո ձեռքդ, սրտիդ քո առատ օժանդակութիւնը, որով կըկերակրէիր հանապազ կարօտեալները. դադարեցան քո հանճարեղ խորհուրդներն որոյ մեծարգիւն եւ խոհական տաղանդովը կառավարիլ ցանկալով, ընակիչք Եւպատորիոյ միահաւան ընտրութեամբ քեզ քաղաքագլուխ կարգեցին: Այդ իսկ հանճարեղութեամբ եւս քո արժանայիշատակ աստուածահաճոյ եւ մեզ փարելի կենացդ ընթացքը կատարելով՝ քեզ Աստուծոյ պարգեւած քանքարը նախանձելի բարեպաշտութեամբ, աղգասիրութեամբ եւ առաքինութեամբ շահելով եւ արդիւնաւորելով, ջերմեռանդն խոստովանութեամբ ընդունելով քո անդարձ ուղեւորութեան վերջին թոշակը, փութացար դիմել առ վարձատուն հաւատարիմ ծառայից, եւ համարեա թէ այժմ իսկ քո անշարժ լեզուդ Առաքելոյն խօսքը կուղէ բարբառիլ. «Զհաւատն պահեցի, ընթացսն կատարեցի»:

Քո այդ ամենայն բարեմասնութեան հանդէսներն տեսնելով երկնքէն ամենատեսն Աստուած, վճռեց քեզ համար մահը՝ իբրեւ կենաց նորոգութիւն, թէ «Պարտ է ապականացուիս այսմիկ զգենուլ զանապականութիւն, եւ մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն»: Ուրեմն թող յաղթէ մեր բնական կարեկցութեան սգոյն՝ մեր սուրբ հաւատքն, ու մեր արտասուքը սրբէ մեր անխաբ յոյսը: Եւ դու, Հոգի խաղաղութեան, երթ ի խաղաղութիւն, հանգիր ի յոյսն անմահութեան: Քո մարմինը թէպէտ մահուան տրխուր կայանքը պիտի հանգչի, բայց Հոգիդ մահուան կապը խզած՝ կալանայ ի յարկին յաւիտենից ուր ամենայն սուրբերն հանգչին: Քեզ ուղեկից՝ քո համանուն պահապան հրեշտակն, եւ մեր աղերսորով պաղատանքը: Քո աստուածապահ տունը եւ համեստափայլ ամուսինը թող մխիթարուին երկնային մխիթարութեամբ, եւ քո յետքն ալ թողած բարեհամբաւ անուանդ եւ առաքինաղարդ վարուցդ յիշատակաւ: Քո մատաղատունկ որդիքդ պիտի խնամէ Հայրն երկնաւոր, որուն կարողութիւնը որչափ մեծ է, այնչափ առատ խնամօք զարգացնէ զնոսա շնորհօք եւ հանճարով, եւ փոխանակ ձեր՝ իւր հայրենակցաց եւ ազգակցաց մխիթարութիւն կանգնեցընէ, ըստ բանին Սողոմոնի թէ «Փոխանակ հարց քոց եղիցին որդիք»: Քո անմխիթար եղբարքը Աստուածորդւոյն կենաստու սուրբ խորհրդոյն առաջը, պիտի անխնայօրէն մատուցանեն իւրեանց աստուածահաճոյ աղօթից հետ քո հոգւոյ համար ընդունելի նուէրներ Աստուծոյ տաճարին, եւ նպաստներ աղքատաց, որոնք քո առատաձեռնութեան սեղանէն կկերակրէին: Քո բարեկամքն եւ քեզմէ բարերարեալքն, քո քաղցր յիշատակները պիտի անմոռաց աւանդեն իրենց որդւոցը: Եւ ահա բարձրեալն Աստուած իւր երկնից աստեղազարդ կամարէն եւ իւր փառաց սուրբ տաճարէն առ քեզ կձայնէ. «Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ. արժանի է մշակն վարձու իւրոյ. մուտ յուրախութիւն Տեառն քո»: Փրկչական ձայն է որ սուրբ Աւետարանը այժմ իմ ականջս ձգեց թէ «Փոխեցաւ իմահուանէ իկեանս»: Զուարճացիր, հոգի աստուածընկալ, յաւիտենական սուրբ կենօք եւ աստուածապարգեւ փառօք: Դարձ ի հանգիստ քո, որովհետեւ Տէրը կոչեց քեզ. նընջէ խաղաղութեամբ այս տապանին մէջ:

Իսկ մեզ, քրիստոսասէր ժողովուրդք, ահա ժամանակ հատուցանելոյ եւ մեր սիրելւոյն մեր սիրոյն երախայրիքը, այս կենաստու սուրբ Խաչին պատուանդանը ցօղելով արտասուքով. արիք միացնեմք մեր աղօթքը այս տխուր յուղարկաւորութեան քահանայական մաղթանքներուն հետ, եւ մեր վերջին հրաժարականը տալով հանգուցելոյս, աղաչեմք զՑիսուս Փրկիչն աշխարհի, հանգուցանել զՀոգի ծառայիս յօթեւանս սրբոց, ներել սորա ամենայն մարդկօրէն սխալանացը, եւ իւր հատուցման վերջին օրն եւ այս թագաւորական հնացեալ պատկերը նորոգել անապական կենօք իւր խոստացեալ արքայութեան փառաւքն. ամէն:

ՅԱԿՈԲ ԱՒԱԳ ՔԱՀ. ՍՈՒՐԻՆԵԱՆՑ.

Հրամայեցաք տպագրել, ի 26 Մարտի 1862. Գաբրիել Վ. Այվազեան:

Ի Տպարանի Թալիպեան Ուսումնարանի Հայոց: